Մրցույթի հայտարարություն

«Երևանի հ.110 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի

թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «Երևանի հ.110 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
   1) ՀՀ քաղաքացիությունը.
   2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
   1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
   4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
   5) ինքնակենսագրություն:
   Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Երևանի հ.110 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2021 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 6-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին:

Մրցույթը տեղի կունենա 2021թվականի հոկտեմբերի 20-ին՝ ժամը 15:00-ին, Երևանի հ.110 հիմնական դպրոցում, հասցեն՝ Սողոմոն Տարոնցի 11:

Տեղեկությունների համար դիմել դպրոցի կառավարման խորհուրդ, Մուադյան Լիլիթ, հեռախոս՝ 010482162, էլ. հասցե՝ 110 dproc@mail.ru: